Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Գետափի Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ) թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3 x 4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3.անձը հաստատող փաստաթուղթ,
4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5. ինքնակենսագրություն(Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները ՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ
7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատվում են պատճենների հետ, բնօրինակները վերադարձվում են մասնակցին:

Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 17–ից մինչև **հունվարի 30-ը** ներառյալ, ամեն օր **ժամը 10:00-ից մինչև 15:00**, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 1-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Շիրակի մարզի «Գետափի Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:
Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Գետափ 1 փողոց, շենք 7. հեռախոս՝ **055 77 56 02:**